ԲԱԽՏԸ ԵՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

ՇԻԼԼԷՐԻ

Թարգմ. Զ. ԲԱԼՈՒՂԵԱՆԻ

Բախտը մի օր իր Սիրելուց նեղացած
Իմաստութեան մօտը թըռաւ ու ասաց.
«Ա՛ռ այս բոլոր իմ գանձերը, բարիքներ
«Եւ եկ դառնանք մենք այսօրից ընկերներ.
«Որքան հարուստ—ես դարգևներ անհամար
«Ցալիս էի քո նախորդին մայրաբար,
«Սակայն էլի նա դըժգոհէր միշտ լինում,
«Ապերախտը ինձ ժըլատէր համարում...
«Ե՛կ, քուրիկըս, միանանք սերտ կապերով,
«Քանի տանջւես դու այդ ծանրը գործերով,
«Թող գութանըդ, արի շուտով համբուրենք,
«Ցեռ, ինչ ուրախ և երջանիկ կը լինենք...»
Իմաստութիւնն նայեց բախտին ու ժըպտաց,
Սև քըրտինքը սըրբեց դէմքից ու ասաց.
«Քո ընկերը գընաց իրան ըսպաննել,
«Հաշտուիր հետը... ես չեմ կարող քեզ սիրել»։